

բոլոր հիշատակված նշանավոր երեք ներկայացուցիչների մասին զետեղված հոդվածներն էլ գրքոված են այդ տեսանկյունից և շոշափում են ավելի լայն խնդիրներ, քան տվյալ գրողի ստեղծագործությունն է: Վեգերովի գրամատուրգիան՝ իր նախորդներով և հաջորդներով, Բյյա ճավանավանի պոեզիան՝ ժողովրդի ամենակենսական շահերին ծառայելու կրթով ու նպատակասլացությամբ և վերջապես Եկալիզմի դարգացման բնթացքը հայ արձակում մինչև Երվանդագին և նրա ստեղծագործության մեջ: Այսպիսով, եթե ժողովածուի առաջին բաժնում հիմնականը Անդրկովկասի ժողովուրդների միջնագարջան պոեզիայի հումանիստական բովանդակության բացահայտումն է, ապա երկրորդ բաժնին կարելի է կցել՝ «եկալիզմը այդ ժողովուրդների գասական գրականության մեջ խորագիրը՝ ազնայելելով միայն, որ նկատի է առնված ազգրենշանական գրամատուրգիան, վրացական պոեզիան և հայ արձակը»:

Միանգամայի նոր խնդիրներ են արժարժվում սովետական գրականությանը եվրոպա բաժնում: Այստեղ երեք ժողովուրդների գրականությանից էլ բնարված են բանաստեղծներ, և, ըստ որում, ամենախոշորները՝ Ն. Չարենց, Մ. Վուրդուն և Գ. Տարիձեն: Իրենց ազգային գրականության մեջ նրանցից չուրաբանչյուրը նշանավորում է դարգացման մի նոր շրջան՝ գաղափարական բովանդակությամբ, ինչպես և արվեստով: Եստ են նրանց միջև ընդհանրությունները՝ մոտիվների, թեմատիկայի, բայց և բոլորովին տարբեր են նրանք իրենց բանաստեղծական նկարագրով: Առաջին երկուսը մեծապես էպիկ բանաստեղծներ են, երրորդը՝ լիրիկ: Մակայն գրական ազգային տրագիդիաներով պայմանավորված այլ են Ն. Չարենցի արտահայտչական գույները, էպիկայի, այսպես ասած, երանգները, և այլ Մ. Վուրդունիներ, այլ է Գ. Տարիձեն, և ոչ միայն նրանով, որ լիրիկ բանաստեղծ է, նա տարբեր է նաև, ասենք, լիրիկ Գեղամ Մարյանից: Այս էլ հենց ելակետ են ունեցել հոգվածագրերը՝ գրականա-

գետներ էգ. Ջրբաշյանը, Բ. Էֆենդյանը և Ե. Ռադիսին: Յուրյ ապ, թե սովետական մեծ բնասիրքում որքան բազմազան և բազմապիսի է Անդրկովկասի ժողովուրդների գրականությանը, քաջահայտել այդ բազմազանության տեղանքներ, այն նորն ու ինքնատիպը, որ այդ բանաստեղծներից ամեն մեկը քերում է իր ժողովրդի ազգային և միամամանակ Մովետական ընդհանուր, միասնական կուլտուրային: Բազմակողմանի ընդգրկում ունեցող ամբողջական գիմանկարներ են դրանք՝ գրված բանաստեղծների ստեղծագործական ուղու և զեղարվեստականարտահայտչական երանգների ու գույների իմացությամբ, նրանց ստեղծած արժեքները վեր հանելու և ընթերցողին մատուցելու համարությամբ:

Միամամանակ, բանի որ խոսքը վերաբերում է սովետական խոշոր բանաստեղծների, հոգվածների հեղինակները անդրադառնում են սովետական գրականության էսթետիկայի սկզբբունքներին, մասնավորապես սոցիալիստական Եկալիզմի մեթոդի և ազգային գրականությանների ավանդներն օգտագործելու հարցերին, տեսական հետաքրքիր եղրակացությունների հանդում նրանց վաստակի կոնկրետ վերլուծության և արժեքավորման տեսանկյունից:

Ժողովածուի բոլոր բաժինների հեղինակներն էլ հաջողությամբ են լուծել իրենց առջև դրած խնդիրները, իսկապես որ շնորհակալ է նրանց կատարած գործը մեր եղբայրական երեք ժողովուրդների գրական-գիտական կյանքին փոխադարձաբար միմյանց ծանոթացնելու ուղղությամբ: Միայն պետք է ցանկանալ, որ այս չուրչ նախաձեռնությունը մեկ ժողովածուով չվերջանա, հրապարակ գան նորերը՝ նոր գրքեր, նոր ժողովածուներ՝ նոր պրոբլեմներով, գրականության մյուս խոշոր դեմքերին նվիրված հետազոտություններով, և ավելի ու ավելի առաջադիմի գրահանադիտությունը՝ ուսումնասիրելու և գնահատելու համար Անդրկովկասի ժողովուրդների գարավոր մեծ գրականությունն ու կուլտուրան:

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Հայկական ՍՍԽ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960, 170 էջ, գինը 52 կ.:

Հանելուկները, ինչպես բանահյուսական մի քանի այլ ժանրեր, մեզանում տակավին չեն ուսումնասիրված, չնայած անցյալում և մեր օրերում բանահավաքներն ու ազգագրագետները մեծ չափով ժողովել են բանավոր գրականության այդ ժանրի նյութերը և հաճախ հրապար-

րակել բանահյուսական-ազգագրական ժողովածուներում ու հանդեսներում: Հայկական հանելուկների մասին մինչև օրս հրապարակի վրա կարելի է գտնել միայն մի քանի հոդվածներ և հարևանցի հիշատակություններ, որոնք պարզապես բանահավաքների կամ բանասերների բա-

ցատրական տեղեկություններ են: Անուշագրությունը հանելուկների հետազոտության նկատմամբ մասամբ պետք է բացատրել առօրյա գործածությունից գուրս նրանց նշանակությունը և արժեքը չգիտակցելու փաստով:

Հայկական ՄՍԽ ԳԱ հրատարակությամբ լույս տեսած Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» աշխատության մեջ հեղինակը ըստ ամենայնի գիտակցելով ժողովրդական հանելուկների պատմա-ճանաչողական ու գեղարվեստական արժեքն ու գերը, մանրազնին հետախուզել է հայկական սկզբնաղբյուրները, բարեխղճորեն հեազոռել հայ բանահյուսության հանելուկային ժառանգությունը և անգլյակ լինելով հիշյալ ժանրին վերաբերող ուսական ու եվրոպական տեսական գրականությունը, հրապարակ է հանել մի հետաքրքրական ուսումնասիրություն հայկական հանելուկների մասին:

Ժողովրդական բանահյուսության մեջ հանելուկը յուրատեսակ ու ինքնատիպ ժանր է: Հանելուկների այդ առանձնահատկությունը պայմանավորված է նրանց այլարանական բնույթով: Արաքսուսա դրանք հիշեցնում են պատկերավոր թվարանական խնդիրների, որոնց լուծմանը պատասխանին նայելով թվում է. թե զազափարախոտական որևէ նպատակագրում չունեն: Բայց խորամուխ լինելով հանելուկային բանաձևի մեջ կտեսնենք, որ այլարանական պատկերների կամ ուղղակի բնութագրումների միջոցով բացվում է մի ամբողջ աշխարհ՝ ժողովրդի դարավոր կենսափորձից բխող ճշմարտություններ, հավատալիքների, ծեսերի, կենցաղային սովորույթների հետքեր, պատմա-ազգագրական փաստեր ու բեկորներ և բազմաթիվ այլ իրողություններ: Հանելուկների ուսումնասիրության դժվարությունն այլարանորեն ու ածանցյալ կերպով դրսևորված այդ հարցերի ու խնդիրների մեջ ճիշտ կոզմոնորոշվելն է, գրանց համոզիչ վերծանումն ու լուսարանում: Ս. Հարությունյանը հաղթահարել է բանահյուսական հիշյալ ժանրի այս դժվարությունը և ներկայացրել է հայ ժողովրդական հանելուկների բազմակողմանի, գիտական վերլուծություն:

Աշխատության առաջին գլխում հեղինակն անդրադառնում է հանելուկների ժանրային առանձնահատկություններին: Առաջին հերթին սա քննում է տվյալ ժանրի անվանումները՝ առակ, առեղծված, հանելուկ, բունգլ, հանք և այլն, օգտագործելով հին մատենագիրներից և այլ աղբյուրներից հասած տեղեկությունները, ժողովրդական բարրաոններում պահպանված անվանումները, ընդ որում փորձում է դրանք մեկնել և իմաստավորել լեզվա-ստուգարանական տեսանկյունից: Այնուհետև հանգամանորեն խոսում է հանելուկների ծագման մասին: Հիշա-

տակելով հնդկական Ռիգվեդայում, իրանական Ավեստայում, պահլավական Յուշտի Ֆրիանում և հունական Սֆինքսի առասպելներում հանդիպող հանելուկային հարց ու պատասխանի փաստերը, հեղինակը դրանք ներկայացնում է որպես հանելուկների նախնական տեսակներ: Այդ առթիվ որպես նմանօրինակ երևույթ հիշատակվում է մեր իրականության մեջ տարածված աշուղների մրցության փաստը: Հեղինակն իրավացիորեն հաստատում է, որ հանելուկները սկիզբ առնելով դեռևս մարդկային հասարակության պատմության նախնական շրջանում, հորձնական կարևոր նշանակություն են ունեցել մարդկանց կյանքում ու կենցաղում և հետագայում են միայն կորցրել այդ անմիջական դերն ու դարձել մտավարժության առարկա:

Աշխատության մեջ մանրամասնորեն պարզարանվում են հանելուկների ձևերը, բնույթը, կառուցվածքը, բանաձևումների և լուծման առարկաների փոխհարաբերության դրսևորումները, հանելուկային այլարանության տեսակներն ու եղանակները և այլն, որոնք փաստարկվում են հայկական հանելուկներից բերված համոզիչ օրինակներով:

Կարևոր ու հետաքրքրական հարցեր են շոշափված աշխատության «Հայկական հանելուկների կապը բանահյուսության մյուս ժանրերի հետ» գլխում: Ուշագրավ է այդ տեսակետից հանելուկների կապը դյուբական ու հմայական աղոթքների հետ: Աղոթքների մեջ, ինչպես Մ. Գորկին է նկատել, երևում է մարդկանց ձգտումը՝ խոսքի մոգական ուժով ազդել բնության երևույթների վրա և ծառայեցնել դրանք իրենց շահերին:

Հանելուկների և աղոթքների ակնբախ ընդհանրությունը նկատվում է նրանց խորհրդավոր բնույթի մեջ. աղոթքը նպատակ ունի ներգործել խորհրդավոր ճանապարհով՝ չհիշելով երևույթի կամ առարկայի անունը: Հանելուկն էլ առարկան ու երևույթը գտնելու համար առաջարկում է խորհրդավոր պայման: Մի շարք օրինակներից երևում է աղոթքից — հանելուկի փոխանցման պրոցեսը:

Ավելի և անմիջական ու տրամաբանական է ժողովրդական առած-ասացվածքների ու հանելուկների կապն ու փոխհարաբերությունը, որը դրսևորվում է ոչ միայն այլարանական բնույթի նմանությամբ, այլև ներքին բովանդակության, ընդհանրություններով: Պատահական չէ, որ շատ առածներ հանելուկային են, իսկ երբեմն էլ առածը վերափոխվել է հանելուկի. բնորոշ է այդ տեսակետից, օրինակ՝ «Գործիչը նստեմ՝ միրուքդ փետեմ» առածը, որը երախտամոռության մասին է ակնարկում, բայց դարձել է հանելուկ՝ սանդերթի վերաբերյալ:

Հեղինակն անդրադառնում է նաև հանելուկների և ժողովրդական խաղիկների կապին, ցույց տալով, թե ինչպես խաղիկների քառատողային կառուցվածքի մեջ առաջին երկու տողը, որոնք բնությունից վերցված անկախ զուգահեռական պատկերներ են, անջատվում են և այլարանական իմաստ ձևեր բերելով դառնում հանելուկների Հետաքրքրական է նաև հանելուկների՝ հերթաթևերի հետ ունեցած առնչությունը։ Մի շարք հերթաթևերում (սկսած և խաղաղ թագավոր, էմինյան ազգագրական ժողովածու, հատ. II և այլն) կան հանելուկների ուղղակի օգտագործումներ, որոնք առաջարկվում են որպես պայման՝ հերթաթի հերոսին փորձելու կամ որևէ դեպք կանխելու համար։ Մեր կարծիքով, սակայն, մի շարք հերթաթևերի մեջ դժվար իրականացվող կամ անհնարին թվացող պահանջների կատարումը հերոսի կողմից, կամ իմաստությամբ առեղծվածային վիճակներից դուրս գալու է պիտոյնները չպետք է նույնացնել հանելուկների հետ։ Դրանք նույնպես պայմաններ են և կարևոր նշանակություն ունեն հերթաթևերի սյուժետային զարգացման համար, բայց ոչ հանելուկային պայմաններ՝ ժանրային բմբռնման տեսակետից։

Ժողովրդի կյանքի ու մտածողության անդրադարձումը հայկական հանելուկներում՝ գլուխը աշխատության ամենածավալուն և կարևորագույն հատվածն է, որտեղ երևան է գալիս II. Հարությունյանի գիտական ինքնուրույն մոտեցումը՝ հանելուկային այլարանության մեջ ժողովրդի կյանքի այլևայլ գծերը և նրա մտածողության, հավատալիքների դրսևորումները վեր հանելու և լուսարանելու գործում։ Բազմաթիվ հարցեր ու խնդիրներ են քննարկվում այս դրվիում, որոնք ցույց են տալիս հեղինակի քաջատեղյակությունը հայկական մշակույթի տարրեր բնագավառներին։

Հանելուկներում անդրադարձում են դեռ պատմական Հայաստանի տեղանունները, որոնք մի կողմից վկայում են հետազոտվող այդ ստեղծագործությունների բնաշխարհիկ լինելու մասին, իսկ մյուս կողմից բնութագրում են տվյալ միջավայրը՝ պատմա-աշխարհագրական և տրևտեսական-քաղաքական տեսանկյունից։ Ուշագրավ են այդ առումով Բասենի, Վանի, Նրևանի, Նախիջևանի և այլ տեղանունների մասին հիշատակվող հանելուկները։

Մեծ տեղ են գրավում նյութական մշակույթի նմուշների մասին (աշխատանքային իրեր, գործիքներ, առարկաներ, կառույցներ և այլն) հյուսված հանելուկները։ Առանձնապես հետաքրքրական են Հայաստանի հնագույն շինարարական արվեստի մասին արձագանքող հանելուկները (բերդ, քաղաք, կամուրջ, բաղնիք, աղբյուր և այլն)։

Հանելուկներում, յուրահատուկ այլարանական պատկերներով, արտացոլում է գտել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի հանելուկների միջոցով հեղինակը որոշակի պատկերացում է տալիս ժողովրդի աշխատանքային-արտադրական առօրյայի ու զրադմունքների մասին։ Անասնապահության, երկրագործության, այգեգործության, բանջարաբուծության, թրոշնարուծության, մեղվաբուծության, շեռամապահության և այլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ հանելուկների քննությամբ հեղինակը բացահայտում է հայ ժողովրդի գեղջկական կյանքի պատկերը։ Այս բաժնում իրենց վերլուծությունն են ստացել նաև արհեստներին ու արհեստագործությանը նվիրված հանելուկները։ Տնտեսական կյանքի ու առօրյայի պատկերը ցուցադրելու հետ մեկտեղ հեղինակն անդրադարձել է նաև այնպիսի հանելուկների, որոնցում նա տեսնում է սոցիալ-դասակարգային հարաբերություններ։ Համաձայն չլինելով հեղինակի որոշ ձևակերպումների հետ, որոնց մասին կիսովի քիչ հետո, պետք է ասել, որ այստեղ ևս նա ցուցաբերել է նուրբ դիտողականություն։ Ահա մի բնորոշ օրինակ. խոսելով այն մասին, թե ինչպես անցյալում պետության հատուկ պաշտոնյաները գյուղացիների կալսած ցորենը անձեռնմխելի պահելու համար հատուկ դործիքի՝ գաջի միջոցով նշան էին անում, հեղինակը բերել է այդ գործիքի մասին ժողովրդի մեջ տարածված հանելուկը։

Գեղմ՝ ենք, մեկ շուն,

Պոչը պուլատ (կարճ), ինք նխշուն։

Շան հետ գաջի ժողովրդական պատկերավոր համեմատությունը ինքնին մի պերճախոս ապացույց է հարկահանության դեմ ժողովրդի ունեցած մշտական դժգոհության և ատելության։

Ազգագրական հարուստ ու փաստալից տեղեկություններ կան ժողովրդի սովորություններին, կենցաղին, վարք ու բարքին նվիրված հանելուկների վերլուծության մեջ։ Այստեղ հատուկ ուշադրություն է դարձված բարոյական հասկացողություններին ու հասարակական բմբռնումներին, որոնցում հեղինակը տեսնում է ճանաչողական-դաստիարակչական առողջ մտքեր։ Բավական պատկերավոր և խորիմաստ մի ստեղծագործություն է այդ տեսակետից գութանի խոփին նվիրված հանելուկը, որը նշում է որպես աշխատանքի և աշխատասիրության մեծարում ու փառաբանություն։ «Մեզ մի հարսն ունենք, գնում ա չանք (մինչև) իրիկուն խողը տալի դիխին. իրիկունն ամենից սիրուն տուն դալի»։

Այլ պահանջները ու հետադարձական է արտաբերել իրերի ու հրեայթների մասին ժողովրդի պատկերացումների. նրա մտածողության ու աշխարհայացքի անգրագրանումը հանելուկներում: Բազմական մանրամասն ու համոզիչ բացատրություններ են արվում հանելուկների մեջ անց գտած ժողովրդի հին հավատալիքների, հեթանոսական-երոնական ծեսերի (հոգի ու մարմին, երակապաշտություն, երկնային մարմիններ ու հրեայթներ՝ երկինք, աստղեր, արև, լուսին, ծով, գիշեր-ցերեկ) և այլնի մասին:

Աշխատության վերջին գլուխը վերաբերում է հայկական հանելուկների արվեստին, որտեղ էությունը երևան է եկել հեղինակի հմտությունը բանահյուսական արվեստի հարցերի լուսարանման ասպարեզում: Ս. Հարությունյանն այստեղ հիմնականում ծանրանում է հանելուկների այլաբանական պատկերների՝ մեծաֆորմերի կառուցման սկզբունքների վրա: Այնուհետև նա բնական է հանելուկների գեղարվեստական արտահայտչական ձևերն ու եզանակները (համեմատություն, անձնավորում, սիմվոլիկա, հիպերբոլա և այլն): Մանրամասն նկարագրում է նաև հանելուկների տաղաչափական կառուցվածքն ու ձևերը:

Վերև ասածից ակներև է, որ Ս. Հարությունյանը կատարել է արժեքավոր ու շնորհակալ մի աշխատանք, որը գեահատելի նորություն է մեր բանագիտության մեջ: Այսուհանգերձ ցանկանում ենք մի քանի գիտություններին անել աշխատության վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ հեղինակը մի շարք առիթներով բնագծում է հանելուկների ժանրային ասանձնահանակությունը, նրանց ալլաբանական բնույթը, այսինքն այն, որ բնության և հասարակական երևույթների արտացոլումը հանելուկներում անմիջական նպատակադրում չեն, այլև հանգես են գալիս կոզմոսիսին, ամանցալ կերպով, գեղարվեստական այլաբանության ու սիմվոլիկայի միջոցով: Այս տեսանկյունից հանելուկների մեջ արտացոլված աշխատավոր ժողովրդի սոցիալական կյանքի ու գասակարգային փոխարարությունների հարցերը քննելիս:

Հարությունյանը շատ գեղեցիկում բերում է համոզիչ օրինակներ: Այդպիսի օրինակներում թեև այլաբանորեն, բայց որոշակի արամագրությանը ցուցադրված է աշխատավոր ժողովրդի երգիծական վերաբերմունքը հարուստների, իշխանավորների (թագավոր, ասեուաներ, գզիր), հոգևորականների (վարդապետ, անրաներ) նկատմամբ: Սակայն սոցիալական անհավասարության, ունեղրկության, ազրատության մոմենտները ցույց տալու համար բերվում են նաև այնպիսի հանելուկներ, որոնք նվազ համոզիչ են, չենլպեո, օրոսադ Վիշերն ազախին, ցերեկը ախ-

կին (անկողին): «Պատավր կայնել է առվին, քառուս կարկատան գոշին» (զազամբ) և այլն (էջ 72):

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ բանահյուսության մեջ մտած հանելուկները ոչ բոլոր տարրերակներն ունեն գեղարվեստական ու գազափարական արժեք ու նշանակություն: Երբեմն պատահում են սահզծասոոթություններ, որոնք թեև ժողովրդական շրջանառության մեջ են, բայց հասարակության հին նեղ խավի, շերտի բմրանումներից չեն բարձրանում և չեն հասնում բսկական ժողովրդական բեկայումների աստիճանին: Պատահում են նաև բանահավաքների կոզմից ազալազումներ ու խմբագրումներ: Մեր կարծիքով այդպիսի մի օրինակ է թուրի մասին բերված հետեյալ հանելուկը (էջ 93).

էս կուոր գար,

էն կուոր գար,

Մեչը արգար:

Այստեղ առղաւ հասկացողությունը հեղինակը վերագրում է կրակին, որպես երբեմնի պաշտամունքի հետք: Այդ բացատրությունը այնքան էլ համոզիչ չէ և հանելուկն էլ ազազազված կամ չլնծու է թվում, քանի որ կա նման մի այլ հանելուկ, (շրով լի ամանի մասին), որն ազելի Վամզիչ է.

էս գին դար,

էն գին դար,

Մեչն անգազար:

Հավանարար սկզբնագրյուններում ազազազած ու հարմարեցրած է. «էն ի՛նչն ա ինչ, երգեն ազիր, ծերը ծաղիկ» (էջ 112) հանելուկի լուծումը: Մեծ պատ և վատիկ, մինչդեռ հայանի է, որ դա հրազի պատրույգին կամ մոմին է վերաբերում:

Զատկի տոնի մասին «կարմիր հագնեմ, սիպաակ մաշեմ» հանելուկը հեղինակը մեկնում է այսպես. «Թանի որ գատիկը միշտ համրեկնում է գարնանամուտի հետ, հանելուկում էլ այդ տրնշությանը փոխարերարար նկատի է առնվել կարմիր գարնան գալը (մյուս կոզմից էլ կարմիրը գատկական գույն է) և սպիտակ ձյան հալվելը» (էջ 112): Թվում է, թե խոսքն այստեղ գատկի ձվի մասին է, որը կարմիր ենրկվում է (սկարմիր հագնեմ), ապա կճկվում է և ուսվում (սպիտակ մաշեմ):

Նշված գիտությունները բնավ չեն նսնմացնում Ս. Հարությունյանի աշխատության գիտական արժեքն ու նշանակությունը: Հայ ժողովրդական հանելուկների մասին սույն ուսում-

հասերությունը, առաինիս լինելով իր տեսակի մեջ, միամտանակ զկայում է հեղինակի բանագրական անվիճելի կարողությունների մասին:

Ուրախալի է, որ Ս. Հարությունյանն այժմ զբաղված է հայկական հանելուկների գրական:

համաժամար իրատարակությամբ, որը շատ օգտակար է ինչիս ինչպես բանահյուսության ուսումնասիրության:

Այնպես է գիտության մի շարք

Ա. ՆԱԶԻՆՅԱՆ

A. PATMAGRIAN, *L'Utilisation des Eléments Folkloriques dans le Chant Liturgique Arménien au XII-e siècle*. Communication Faite au XXIII-e Congrès International des Orientalistes Août 1954, Cambridge:

A. PATMAGRIAN, *The Utilisation of Elements of Folklore in the Armenian Liturgical Music in the Twelfth Century*. Communication Made at the XXIII International Congress of Orientalists Cambridge, August, 1954.

Ա. ՊԱՏՄԱԳՐԻԱՆ, *Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգի մեջ ժԲ դարում*: Ձեկուցում Արևելագետների միջազգային համաժողովին, օգոստոս, 1954, Փեմբրիջ: Paris, 1955.

Սփյուռքում անվանի երաժշտագետ-կոմպոզիտոր Աշոտ Պատմազրյանի այս ուշագրավ աշխատությունը, որ չույս է տեսել Փարիզում 1955 թ., հեղինակի այն զեկուցման տեղան է, որը նա կարգացել է 1954 թ. Փեմբրիջում տեղի ունեցած՝ Արևելագետների միջազգային 23-րդ կոնգրեսում, արժանանալով կոնգրեսի մասնակիցների ասանձին ուշագրությունը:

Ա. Պատմազրյանի բնարած թեման ինքնին չափազանց հետաքրքրական է՝ նրա նպատակն է եզել ցույց տալ, որ հոգևոր երաժշտությունը մեզոփրդական երաժշտության տարրերով հարստացնելու և թարմացնելու ուղղությամբ XVI—XVII դդ. եփրդական երկրներում անվան շարժումը Հայաստանում իր արտահայտությունն է գտել գրանից շորս դար առաջ՝ XII դարում և հասկապես ներսես Ենորձայու ստեղծագործության մեջ: Գտնունակությամբ պետք է նշել, որ հեղինակն իրոք հասել է իր նպատակին, որովհետև նրա բերած պատմական տեղեկությունները և մանավանդ հոգևոր երգերից ու ժողովրդական երաժշտությունից քաղած օրինակներն ակնառու կերպով ցույց են տալիս վերոհիշյալ երևույթի առկայությունը հայ իրականության մեջ:

Հեղինակը ճիշտ կերպով բնագծել է այն հանգամանքները, որոնց շնորհիվ դարեր շարունակ ժողովրդական և գուսանական երաժշտության զեմ պայքարող հայ եկեղեցին ստիպված էր գիմել նույն այդ «գիմական», «լուսիշ» և այլ մակերևներով որակված աշխարհիկ երաժշտ-

ություն գտնաբերել և առատորեն օգտվել նրա հարստություններից:

Հայտնի է, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելուց հետո հոգևոր հայրերը՝ մեծ աշխատանք ժամակցին հույրը գրերը՝ հայերեն թարգմանելու և ժողովրդին հասկանալի դարձնելու ուղղությամբ: Նրա պատանասն այն էր, որ հունարեն և ասորերեն կատարվող ժամերգություններն անմատչելի և անհասկանալի էին ժողովրդի համար: Ժողովրդական լայն խավերը գերազանում էին ներկա լինել հրապարակներում՝ կատարվող գուսան-վարձակների երգախմբի զվարճալի ներկայացումներին ու գեղարվեստական բազմակուսությունն ստանալ, քան թե ժամերգ եկեղեցում լսել հունարեն կամ ասորերեն անհասկանալի ժամերգություններն ու ձանձրանալ: Հոգևորականությունը մեծ հոգս էր պատանում այն, որ հեղհեան ավելի շատ համառացյալներ էին կարվում՝ եկեղեցուց և տարվում գուսանական երգ ու եփագուլ: Անհրաժեշտ էր միջոցներ գտնել այդ երևույթի գեմն ասնելու համար: Եկեղեցականները շուտով եկան այն նպատակացության, որ ժողովրդական գանգժաններին եկեղեցու հետ կապելու համար կարևոր ու անհրաժեշտ է քարենորոգել հայ հոգևոր երաժշտությունը, թարմացնել ու գրավիշ դարձնել այն: Իսկ այդ բանին հասնելու համար անհրաժեշտ էր լայնորեն օգտվել նույն այդ ժողովրդի եկեղեցում տարածված երգ-երաժշտությունից: Չնայած այն բանին, որ հայ եկեղեցին նույնպես բնորենից լավագիկի կրոնական ժողովի (360) 32-րդ կանոնը, որով